Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1077

208-21
U-96

2010

Հովհ. Հայկունի

208.21
Ա-96

36 686 ա.

ՀՐԱՄԱՆԱՒ

ՍՒՆՕԴԻ

ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

ԱՌԱՒԼԻՆ

200 Ար
385-Ս Ր
72 Ար
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI-1922
208.21
Ս-96
(1004) 20007-59
46361
2001

Գ. ՔԱՐՈՋ

ՇԱՄԱԽԻՈՑ ԵԿԵՂԵՑԻԱՅԻ ԱՌԱՔԵԼԻՈՅ ԱՆՎԱՆ

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՍՐԲՈՑ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ. (ԳԼ. Զ. 1—49)

«1. Եւ եղև ի շաբաթու յերկրորդում առաջնոյն՝ անցանել նմա ընդ արտորայսն, և աշակերտքն նորա կորզէին հասկ, շփէին ընդ ափ, և ուտէին։ 2. Եւ ոմանք ի փարիսեցւոցն ասեն ցնոսա. Զի՞նչ գործէք զոր չէ օրէն՝ ի շաբաթու։ 3. Պատասխանի ետ նոցա Յիսուս, և ասէ. չի՞ցէ ընթերցեալ ձեր զոր արարն Դաւիթ, յորժամ քաղցեաւն ինքն և որ ընդ նմայն էին։ 4. Զիարդ եմուտ նա ի տունն Աստուծոյ, և ըզհացն զառաջաւորութեան եկեր, և ետ այնոցիկ՝ որ ընդ նմայն էին. զոր ոչ էր օրէն ուտել, բայց միայն քահանայապետին։ 5. Եւ ասէ ցնոսա. Տէր է որդի մարդոյ և շաբաթու։

«6. Եւ եղև ի միւսում շաբաթուն մտանել նմա ի ժողովուրդն և ուսուցանել. և էր անդ այր միւև ձեռն իւր աջ գօսացեալ էր։ 7. Եւ սպա-

2001

սէին նմա դպիրքն և վարիսեցիք, թէ ի շաբաթուն բժշկիցէ, զի գտանիցեն չարախօսութիւն զնմանէ։ 8· Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա· ասէ ցայրն, որոյ ձեռն գօսացեալ էր, արի՝ անց ի մէջ։ Եւ նա յարուցեալ եկաց։ 9· Ասէ ցնոսա Յիսուս· Հարցիս ինչ զձեզ։ Զի՞նչ արժան է ի շաբաթուս բարի՞ ինչ առնել, եթէ չար առնել· ոգի՞ մի ապրեցուցանել՝ թէ կորուսանել։ 10· Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին՝ ասէ ցնա· Ձգեա զձեռն քո· և նա ձգեաց· և հաստատեցաւ ձեռն նորա իբրև զմիւսն։ 11· Նոքա լցան յիմարութեամբ և խօսէին ընդ միմեանս՝ թէ զի՞նչ առնիցեն Յիսուսի։ 12· Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել ի լեառն կալ յաղօթս· և հանէր զգիշերն ի գլուխ յաղօթսն Աստուծոյ։

«13· Եւ իբրև այգ եղև՝ կոչեաց զաշակերտսն իւր, և ընտրեաց ի նոցանէ երկոտասանս՝ զորս և առաքեալս անուանեաց։ 14· զՍիմովն՝ զոր և Պետրոսն անուանեաց՝ և զԱնդրէաս եղբայր նորին՝ և զՅակոբոս՝ և զՅովհաննէս՝ և զՓիլիպպոս՝ և զԲարթողոմէոս։ 15· և զՄատթէոս՝ և զԹովմաս՝ և զՅակոբոս ալփեայ՝ և զՍիմովն՝ զկոչեցեալն նախանձայոյզ։ 16· և զՅուդայ Յակոբայ՝ և զՅուդայ սկարիովտացի՝ որ եղև իսկ մատնիչ։ 17· Եւ իջեալ նոքօք հանդերձ ի տեղի մի ստվարակ՝ և ժողով աշակերտացն նորա՝ և բազմութիւն յոյժ ժողովրդեանն յամենայն Հրէաստանէ՝ և յԵրուսաղեմէ՝ և յայնմ կողմանէ՝ և ի ծովեզերէն Տիւրոսի և Սիդոնի։ 18· որ եկին լսել ի նմանէ՝ և բժշկել ի հիւանդութենէ իւրեանց։ և նեղեալքն յայսոց պղծոց՝ բժշկէին։ 19· Եւ ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ ի նա՝ զի զօրութիւն բաղում ելանէր ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին։

«20· Եւ նա ամբարձ զաչս իւր յաշակերտսն իւր՝ և ասէ· Երանի՝ աղքատացդ հոգւով՝ զի ձեր է արքայութիւն Աստուծոյ։ 21· Երանի՝ որ քաղցեալ են այժմ՝ զի յագեսցին։ Երանի՝ որ լան այժմ՝ զի ծիծաղեսցին։ 22· Երանի՝ է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ մարդիկ՝ և յորժամ որոշիցեն զձեզ՝ և ատիցեն՝ և հանիցեն անուն չար զձէնջ վասն Որդւոյ մարդոյ։ 23· Ուրախ լիջիք յաւուր յայնմիկ և ցնծաս-

ջիք, զի ահա վարձք ձեր՝ բազում են յերկինս։
ըստ դմին օրինակի առնէին մարգարէիցն՝ հարք
իւրեանց։ 24։ Բայց վա՛յ ձեզ մեծատանցդ, զի
ընկալայք զմխիթարութիւն ձեր։ 25։ Վա՛յ ձեզ՝ որ
յագեալք եք այժմ, զի քաղցիցէք։ վա՛յ ձեզ՝ որ ծի-
ծաղիքդ այժմ, զի սգայցէք և լայցէք։ 26։ Վա՛յ ձեզ
յորժամ բարի ասիցեն զձէնջ ամենայն մարդիկ,
զի այդպէս առնէին սուտ մարգարէիցն հարք
նոցա։ 27։ Այլ ձեզ ասեմ՝ որ լսէքդ։ սիրեցէք
զթշնամիս ձեր։ բարի արարէք ատելեաց ձերոց։
28։ Օրհնեցէք զանիծիչս ձեր, աղօթս արարէք
ի վերայ նեղչաց ձերոց։ 29։ Որ հարկանէ ըզ-
ծնօտ քո, մատո՛ նմա և զմիւսն։ և որ հանէ
ի քէն զբաճկոն քո, մի արգելուր ի նմանէ և
զշապիկս։ 30։ Ամենայնի՝ որ խնդրէ ի քէն՝
տուր, և զոր ինչ հանէ զք ի քէն, մի պահան-
ջեր։ 31։ Եւ որպէս կամիք թէ արասցեն ձեզ
մարդիկ, այնպէս արասջիք և դուք նոցա։ 32։
Եւ եթէ սիրէք զուք զսիրելիս ձեր, զի՞նչ շնորհ
է ձեր։ զի և մեղաւորք սիրեն զսիրելիս իւր-
եանց։ 33։ Եւ եթէ բարի առնէք բարերարաց
ձերոց, ո՞ր շնորհ է ձեր։ զի և մեղաւորք զնոյն

գործեն։ 34։ Եւ եթէ տայք փոխս այնոցիկ,
յորոց ակն ունիք առնուլ, ո՞ր շնորհ է ձեր։
քանզի և մեղաւորք մեղաւորաց փոխս տան։ զի
առցեն անդէն զկշիռն։ 35։ Բայց՝ սիրեցէք ըզ-
թշնամիս ձեր, և բարի արարէք ատելեաց ձե-
րոց, և տուք փոխ՝ ուստի ոչ ակն ունիցիք առ-
նուլ։ և եղեցին վարձք ձեր՝ բազում, և եղի-
ջիք որդիք բարձրելոյ։ զի նա քաղցր է ի վերայ
չարաց և ապաշնորհաց։ 36։ Եւ եղերուք գը-
թածք, որպէս և զհայրն ձեր գթած է։ 37։ Մի՛
դատիք, և ո՛չ դատիցիք։ մի՛ պատժէք, և ո՛չ
պատժիցիք։ արձակեցէք, և արձակիցիք։ 38։
Տուք, և տացի ձեզ, չափ բարւոք, թափաղուն,
շարժուն, ղեղուն տացին ի գոգս ձեր։ նոյնին
չափով՝ որով չափէք՝ չափեսցի ձեզ։ 39։ Ասաց
և առակ մի առ նոսա։ միթէ՞ կարիցէ կոյր՝ կուր-
ի առաջնորդել։ ո՞չ ապաքէն երկոքին ի խոր-
խորատ անկանիցին։ 40։ Ո՛չ է աշակերտ՝ լաւ
քան զվարդապետ իւր։ ամենայն կատարեալն
եղիցի իբրև զվարդապետ իւր։ 41։ Զի՞ տեսա-
նես զշիւղ յական եղբօր քոյ, և ի քում ական
զգերանդ ոչ նշմարես։ 42։ Կամ՝ զիա՞րդ կա՞

բես ասել ցեղբայր քո. Եղբայր, թող հանից
զշիւղդ յականէ քումմէ, և դու ի քում ական
զգերանդ ոչ տեսանես. կեղծաւոր, հան նախ
զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսջիր
հանել զշիւղ յականէ եղբօր քոյ։ 43. Զի ոչ է
ծառ բարի, որ առնէ պտուղ չար, և ոչ դար-
ձեալ ծառ չար, որ առնէ պտուղ բարի։ 44. Զի
իւրաքանչիւր ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի։ Զի
ոչ եթէ ի փշոյ քաղեն թուզ, և ոչ ի մորենւոյ
կթեն խաղող։ 45. Մարդ բարի՝ ի բարի գան-
ձուոյ սրտի իւրոյ բղխէ զբարի. և մարդ չար՝
ի չարէն բղխէ զչար. քանզի ի յաւելուածոյ
սրտին խօսի բերան նորա։ 46. Զի՞ կոչէք զիս
տէր, տէր, և զոր ասեմն՝ ոչ առնէք։
47. Ամենայն՝ որ գայ առիս, և լսէ զբանս իմ և
առնէ զնոսա, ցուցից ձեզ ո՛ւմ նման է։
48. Նմանէ առն, որ շինիցէ տուն, որ փո-
րեաց և խորեաց, և եդ հիմն ի վերայ վիմի.
ի յառնել հեղեղաց՝ բախեաց գետ զտունն, և
ոչ կարաց շարժել զնա. զի հաստատեալ էր հիմն
ի վերայ վիմի։ 49. Իսկ որ լսէ զբանս իմ և
ոչ առնէ, նման է առն, որ շինիցէ տուն ի վերայ

հողոյ՝ առանց հիմանց, զոր բախեաց գետ, և
փլաստարակի անկաւ. և եղև կործանումն
տանն այնորիկ՝ մեծ։»

Սուրբ Աւետարանի այս ընթերցուածն՝ Գ. տետ-
րում զետեղուած ընթերցուածի շարայարութիւնն է.
նախորդ ընթերցուածն աւարտեցաւ՝ նոր կարկատանի
և նոր գինւոյ առակներով. որոնցմով պատասխանեց
Փրկիչն՝ Յովհաննու աշակերտաց և փարիսեցւոց
հարցմանցն. որ կհարցնէին պահոց մասին։ Փարի-
սեցիք գեռ ևս չհասկացան Փրկչին գործերն, և
դարձեալ կչարախօսէին, թէ շաբաթը չպահէր. և
կհետևէին Փրկչին, որպէս զի նորա գործերն՝ օրի-
նաց հակառակ ցուցնեն։ Փրկիչն իւր վարդապե-
տութիւնն ու գործերն կշարունակէր, և ամեն տեղ
փարիսեցւոց կարծիքը կհերքէ օրինաց խօսքերով և
դէպքերով, ինչպէս որ այս ընթերցուածում ևս կտեսնենք։

«Գլ. Զ. 1. Եւ առաջին շաբաթի երկրորդ շաբաթ օրն
պատահեցաւ նոր (ցխոռոի) արդերէն անցնել. և նորա ա-
շակերտքն հոգ կտրէին. և ագէրոտն կշփէին, և կո-
դէին։»

«Առաջին եօթնեակի երկրորդ շաբաթ օրն» ասած
խօսքն հասկանալի է զատկի եօթն օրերէն ետքն պա-
տահած առաջին շաբաթ օրն, ըստ որում զատիկն
ամսաթուով որոշուած է, նորա առաջին օրն այլ և

այլ օրեր կպատահի, վասն որոյ և առաջին շաբաթն՝ կարող է երբեմն զատկի առաջին օրն պատահել, և երբեմն երկրորդ օրը. և այսպէս մինչև եօթներորդ օրը կարող է պատահել. եթէ զատկի օրն՝ շաբաթ պատահի, զատկի ութերորդ օրն կլինի «առաջին շաբաթի երկրորդ շաբաթն». իսկ եթէ զատկի առաջին օրն կիւրակէ պատահի. «առաջին շաբաթի երկրորդ շաբաթն» կպատահի զատկի տասն և չորսերորդ օրն. Այս շաբաթն՝ սովորաբար հնձոց երեխայրի մատուցանելու ութերորդ օրն է, որ զատկի ութերորդ օրէն, մինչև տասն և հինգերորդ օրն կպատահի։ Այս զատկի օրերուն հետևող շաբաթ օրն՝ Յիսուսի աշակերտներն քաղցած կպատահին, և արտերէն անցնելու ժամանակ՝ հասկեր կուտեն։ Փարիսեցիք՝ որ Յիսուսի գործերն՝ օրինաց հակառակ ցուցնել կուզէին, կհարցնեն աշակերտներուն՝ յանդիմանելով։

«2. Եւ փարիսեցիքն ասին՝ ասացին նոցա, ի՞նչ կըգործէ՝ զոր շաբաթն չըգործել չէն։

Փարիսեցիք՝ «Շաբաթ օրը սրբել» պատուիրանին բուն ոգին չէին հասկանար, այլ միայն արտաքին ձևովն կպահանջէին. որոց կպատասխանէ Յիսուս՝ սրբութեան իրաւունքն ցուցնելով.

«3. Յիսուս պատասխան տուաւ նոցա, և ասաց. ի՞նչ դարձեալ չընթերցա՞ք դուք զոր արարն Դաւիթ, երբ որ քաղցեցին և իրեն հետ եղողներն. 4. Ի՞նչպէս մտաւ Աստուծոյ տունը, և առաջաւորութեան հացը կերաւ, և իրեն հետ եղողներուն ալ տուաւ, զոր ուրիշ չէրն չէր (նոցա) բայց միայն քահանայապետներուն։

Դաւիթ՝ Սաւուղի երեսէն զերծած կհասնի ի Նոմբայ, կդիմէ քահանայապետին, և հաց կուզէ. քահանայապետին մօտ պատրաստ կգտնուէր միայն առաջաւորութեան հացն։ Քահանայապետն կհարցնէ Դաւիթի հետն եղող երիտասարդաց սրբութեան վիճակն։ Եւ Դաւիթ կպատասխանէ. «ի կանանց մեկուսի եմք յերեկէ և յեռանդէ. յելանել ինձ ի ճանապարհս սրբեցան և մանկտին. զի և ճանապարհը իսկ պիղծ է. և վասն այնորիկ այսօր սրբեցի գործովս իմով»։ (Ա. Թագ. ԻԱ. 5)։ Քահանայապետն այլ ևս կապահովի պահանջուած սրբութեան մասին, և առաջաւորութեան հացէն կուտայ նոցա։ Փարիսեցիք կսկսին միտք անել՝ թէ ինչպէս արդարացուցեալ քահանայապետն՝ այս գործը. և Դաւիթի մեղք չհամարուեցաւ. ի հարկէ միտք արին՝ թէ Դաւիթի օծեալ Տեառն էր, և որպէս զի ապրի քաղցէն, տուաւ նմա քահանայապետն։ Փարիսեցւոց այսպէս միտք արած ժամանակն՝ կվճռէ Յիսուս։

«5. Եւ ասաց նոցա. Մարդոյ որդին՝ շաբաթին Եւ տէր է։

Մարկոս աւետարանիչ՝ այս վճռէն յառաջ ուրիշ մի վճիռ կյաւելու. թէ շաբաթը՝ մարդուն համար եղաւ, և ոչ մարդը՝ շաբաթին համար. (Բ. 27)։ Այս վճիռն՝

այսպէս կհետևի մէջ բերուած օրինակէն։ Ըստ որում Դաւիթ իբրև օծեալ Տեառն՝ երեք օր ի կնոջէ հեռի լինելով՝ արժանի է արգելեալ հացն ուտելու՝ որպէս զի քաղցի վտանգէն—մահէն ազատանի։ Փրկչին աշակերտներն՝ շատ օրերէ ի վեր սուրբ են ի կանանց և Աստուծոյ Օծեալին Քրիստոսի վարդապետութիւնը լսելով սրբուած են։ և զի շաբաթը մարդուն համար է, շաբաթին տէրը կթոյլատրէ այն սուրբերուն՝ որ քաղցի վտանգն անցունելու չափով ուտելու գործը գործեն շաբաթ օրը։ Շաբաթ օրը գործելն արգելուած էր։ բայց ուտելն արգելուած չէր. ուտելիքն եփելու համար կրկուտ ժողովելն ևս արգելուած էր. բայց առանց եփելու ուտելն արգելուած չէր. այսպէս կթոյլատրէ Յիսուս փրկիչ՝ որ քաղցածներն՝ հանապազորդ հացին գործը գործեն, իբրև մահը հեռացնել։ Փարիսեցիքն՝ այս վճռոյն դէմ չկարողացան մի խօսք բերել օրէնքէն, բայց չդադարեցին զՅիսուս օրինազանց համարելէ. և կհետևէին նորան, որ նորա գործած տեղերումն՝ զարմացած ժողովրդեան առջևն շաբաթօսեն, և նորա վերայ տարածուած փրկագործութեան համբաւն լսեցնեն։

«6. Եւ պատահեցաւ նոյն դարձեալ օրը ժողովարանը մտանէր. և սորվեցնէր. և այն տեղ մարդ մի կար, և որոյ աջ յեռանդն քարուկոծեալ էր։ 7. Եւ դպիրներն ու փարիսեցի-

նէրն կսպասէին նմա. որ նորա վերայ շաբաթօսութիւն բերանէն։ 8. Եւ նա՝ նոցա այս խորհուրդը գիտէր. ասաց մարդուն՝ որուն յեռանդը քարուկոծեալ էր. Եկ. մեջ տեղն անցիր։ Եւ նա ելաւ կանգնեցաւ։

Փրկիչն՝ իւր սովորութեան համեմատ շաբաթ օրը ժողովարան կմտնէ, և Աստուծոյ արքայութեան քարոզը կշարունակէ օրէնքէն և մարգարէներէն ուսուցանելով. զոր զանց կանէ աւետարանիչն՝ այս տեղ մէջ բերել։ Փարիսեցիներն ու դպիրներն ականջ կանեն սորվեցուցածին՝ իբրև ունկնդիր. բայց միևնոյն ժամանակ կսպասեն, որ Յիսուս մի գործ ևս գործէ, որ չարախօսեն նորա վերայ, իբրև թէ շաբաթը սուրբ չպահէր։ Փրկիչն՝ ինչպէս չէր դադարեր ուսուցանելէ, նոյնպէս չդադարիր և Աստուծոյ գործը գործելէ. և խօսքին աւարտմանը՝ կկանչէ գօսացեալն. որոյ տկարութիւնն ամենուն աչքի առաջն ի տես հանելէ ետքն, կդառնայ փարիսեցւոց, և նոցա կարծիքն ու խորհուրդն յանդիմանելով կհարցնէ։

«9. Յիսուս ասաց նոցա. Ի բա՞ն հարցնեմ յեզ չքաւոր օրն ի՞նչ արժէ. է, բարի՞ է անել, թէ չա՞ր գործել. ի՞նչ ապրեցնե՞լ թէ խորտնցնել։ 10. Եւ նոքա խոնջն ամենեքին վերայ նայելով ասացին, ասաց նորան (գօսացեալին). երիտասարդ յեռանդ, և նա երիտասարդ. և նորա յեռանդն հաստատեցաւ ինչպէս դիտան։

Փրկչին այս հարցման չեն պատասխաներ փարիսեցիք,

ըստ որում՝ օրէնքն յայտնապէս կհրամայէ բարի գործն գործել և շաբաթ օրումն. ըստ որում և շաբաթ օրերումն կգործէին քահանաներն տաճարին մէջ. կզոհէին, կթլփատէին։ Նոյնպէս և ժողովուրդն մուրքքում կապուած անասունները կարձակէին և ջուրի կտանէին, ջրհորն ինկած անասունն ալ կհանէին։ Փարիսեցիք չպատասխանելով, կդատապարտեն իրենց կարծիքն՝ այս հարցման առաջ. վասն որոյ և զայրագին կնայի Փրկիչն ամեն կողմն, և կը-գթայ գօսացեալին, որ մէջ տեղում կեցած կսպասէ բժշկութեան։ Կհրամայէ Փրկիչն «Երկնցո՛ւր ձեռքդ» կերկնցնէ ձեռքն, և կհաստատուի ինչպէս միւսն։ Այս բժշկութեան մէջ գրեթէ ոչ մի մարմնական գործ չկայ, որ օրէնքէն արգելուած լինէր, և փարիսեցիք գոնէ ըստ երևութին պահանջէին համեմատել օրինաց։ Ձեռքն երկնցնել կամ ոտքը փոխել՝ արգելուած չէր. այլ օրէնքը կարգելէր, որ մարմնական շահուց ետևէ չլինէին։ Փարիսեցիները՝ այս բժշկութեան վերայ խօսելու խօսք ալ չը-գտան. ինչպէս անդամալուծի բժշկութեան մէջ կդատապարտէին, թէ արժան չէր, որ անդամալոյծը՝ շաբաթ օրն՝ ուան առնէր իւր մահիճը։ Փարիսեցիք որ միայն օրինազանցութիւն կփնտռէին Յիսուսի վերայ, այս անգամ շփոթեցան բոլորովին։

«11. Նոյնպէս (փարիսեցիքն) յիմարութեամբ լեցուեցան, և

ելին միմեանս՝ հետ կխօսէին, թէ ի՞նչ անէն Յիսուսին։

Յիսուսի յանդիմանութեան առաջ ապ ի բերան մնացին փարիսեցիք, և ժողովրդեան առաջ կոտրուեցան, և կխորհին՝ թէ ինչ հնարք մի անեն, որ այս կոտրուածնին վերականգնեն։

«12. Եւ այն օրերումն լեռն ելաւ, որ աղօթէ կենայ. և ամբողջ գիշերն Աստուծոյ աղօթումն կանգնուեր։

Փրկիչը՝ բանիւ ուսուցանելուն հետ միասին և գործով կուսուցանէր. և ժամանակ ժամանակ՝ ինչպէս կերևի, գրեթէ ամեն եօթնեկում՝ աղօթքի կկենայ առ Աստուած՝ ըստ մարդկութեանն՝ օրինակ տալով աշակերտներուն, որ իրենց տկարութիւնը զօրացնեն աղօթքով։ Աղօթքի համար կմեկնի Յիսուս ժողովուրդէն, որպէս զի միջոց տայ նոցա, լսածնին իմաստասիրելու, և իւրացնելու։

«13. Եւ երբ առաւօտ եղաւ. կոչեց իւր աշակերտները. և նոցանէն տասնիքսան (հոգի) ընտրեց, զորս և առաքեալներ անուանեց։

Փրկիչն արդէն ունէր բաւական աշակերտներ, որոնք իրեն հետ կշրջէին. այս աշակերտներն՝ փրկչին սորվեցուցած արքայութեան քարոզներուն ունկնդիր էին ամեն տեղ ժողովուրդներու հետ, նաև առանձինն տեղերում միայնակ կհարցնէին և կուսանէին։ Փրկիչն՝ իւր վարդապետութեան ուսումն տալով հանդերձ, կընտրէ աշակերտներէն տասներ-

կուքն, և առաքեալ կանուանէ։ Ո՞ւր խրկուեցան սոքա։—Այս անունով՝ իւր նպատակը կայտնէ Փրկիչն, թէ պիտի խրկէ զնոսա, որ երթան Իսրայէլի տասներկու ցեղերուն քաղաքներն ու գիւղերն շրջեն, ուսուցանեն և բժշկեն։

« 14. Սիմովնէին, զոր և Պետրոս անուանէց. նորա եղբայրն Անդրէասը. և Յակոբոսը, և Յովհաննէսն, և Փիլիպպոսն, և Բարթողոմէոսն, 15. և Մատթէոսն, և Թովմասն, և Ալփեոսն Յակոբոսն, և Նախանձայոյզ կոչուող Սիմոնը. 6. և Յակոբէսն Յուդասն, և Սկարիովտացի Յուդասն, որ մատնիչն եղաւ։

Երկոտասան առաքելոց անուններն թուելու ժամանակ՝ նոցա բնաւորութիւնն ցուցնող անուներ ևս կայարեն աւետարանիչներն, որով նոցա հաւատոց ուժգնութիւնն կայտնուի. ինչպէս են Պետրոս, Փանիրէթէս, Նախանձայոյզ։ Յովհաննու պատմած նկարագրումն, թէ ինչպէս կոչեց Յիսուս իւր աշակերտներն, կերևի, թէ այս երկոտասաններն՝ այնպիսի ոմանք էին, որ գեռ ևս զՔրիստոս չտեսած, կհետևէին և կինտրէին, որ գտնեն. որոց ոմանց ինքնին գտնուեցաւ Յիսուս, կոչելով զնոսա. և ոմանք՝ Յովհաննու վկայութիւնէն ճանչցան, և գնացին նորան յարեցան. այս կարգի աշակերտներէն կընտրէ Յիսուս՝ Հրէից տասներկու ազգին խրկելիք քարոզիչներն։

« 17. Ի՝ նոցա հետ դիմէն պատուիրակ դեղ մի էջած (էր) Ի նորա աշակերտներու՝ ժողովն, և շատ քաղաքաբնակ ժողովուրդներու՝ (որ էին) բոլոր Հրէաստանէն, և Երուսաղեմէն, և անդէն կոյսէն, և Տիրոսի և Սիդոնի ծովեզերքէն։ 18. Որ եկին լսել նորան, և բժշկիսել էրենց հիւանդութիւնքէն և դեւք այրերէն նեղուածներն կբժշկէին։

Փրկիչն երբ կհեռանար ժողովուրդներէն, և լեռներն ու անապատներն կքաշուէր, ժողովուրդներն ետևէն կերթային և կինտրէին. այս փնտռող ժողովուրդն՝ երկու տեսակ թելադրութիւն ունէին. ոմանք հիւանդութենէ բժշկուելու հաւատով կուգային, և ոմանք՝ մարգարէից խոստացած փրկութեան խօսքնու գործն լսելու և տեսնելու ցանկութեամբ կուգային։ Փրկիչն անդադար կուսուցանէր, և կգործէր. մանաւանդ՝ գիւաՀարներն կբժշկէր, յորում՝ յայտնի կերևէր, թէ Փրկչին խօսքն՝ մարդկան հոգիներն կփրկէ սատանայի կապանքներէն։

« 19. Ի՝ բոլոր ժողովուրդքը կուշէին, որ նորան դիպչեն, զի շատ զօրութիւն կելնէր նորանէն, և ամենքն կբժշկէր։

Բժշկուելու ակնկալութիւն ունեցող ժողովուրդն՝ աւելի մեծ եռանդով կգիմէր Յիսուսին և կբժշկուէր։ Իսկ Փրկիչն աւելի ևս կուսուցանէր Աստուծոյ արքայութիւնն, և ցանկալի կանէր լսողներուն։

«20. Եւ նա ասէր վերցո՛ց դէպ յաշակերտներն, և ասաց. Երանի (յԵղ) հոգւովք աղքատներո՛ւդ, զի յերնէ Աստուծոյ արքայութիւն։

Փրկիչն՝ աղքատ կանուանէ իւր աշակերտներն, և հոգւով աղքատ։ Այս աշակերտեալներն՝ արդէն զգացել են, թէ Աստուծոյ հոգին մարդկան վերայէն հեռացել էր նախաջրհեղեղեան անօրէնութեանց երեսէն, և թէ Աստուած խոստացաւ մարգարէից միջոցաւն՝ թէ Փրկիչը պիտի գայ, պիտի ուսուցանէ զմարդիկ, և անօրէնութեան ճանապարհէն դարձնէ, մեղքերը վերցնէ, և Աստուծոյ հոգին տայ նոր սերընդեան վերայ։ Աշակերտներն այս գիտութեամբ կսպասէին Աստուծոյ հոգին ընդունելու. որոց այս ակնկալութենէն առած կանուանէ զնոսա՝ հոգւով աղքատ։ Եւ կվճռէ, թէ այս կարօտեալներունն է Աստուծոյ արքայութիւնն։

«21. Երանի՝ նոցա՝ որ այժմ քաղցած են, զի պիտի կշտանան։ Երանի՝ նոցա՝ որ այժմ կո՛լան, զի պիտի ծիծաղին։

Փրկիչն՝ երբ Աստուծոյ արքայութիւնը կքարոզէր, այն արքայութեան հասնելու համար, այս աշխարհի գոյքերէն հրաժարել կպայմաններ. աշակերտներն՝ արդէն հրաժարել էին իրենց ամեն ինչքերէն և տեղէն. հետևաբար և քաղցած էին, և նեղութեան մէջ էին. այս նեղութեամբ Աստուծոյ

արքայութիւնը պիտի շահէին. և պիտի յագենային ու ուրախանային։ Աղքատ կայ, որ չգիտէր, թէ աղքատ է. վասն որոյ և չէ կարող մտածել. թէ ինչպէս կարելի է բարւոքել իւր աղքատութիւնը, և այնպէս կմնայ միշտ աղքատ, և զուրկ Աստուծոյ ընդհանուր պարգևէն։ Աղքատ ալ կայ, որ գիտէ, թէ ինքն աղքատ է, և կմտածէ, թէ ինչպէս կարելի է բարւոքել իւր աղքատութիւնն, և Աստուծոյ մատակարարած հանրական բարիքին մասնակից լինել։ Աշակերտներն՝ այս կարգի աղքատներէն էին. գիտէին, թէ իրենք աղքատ են, զրկուած են Աստուծոյ հոգւոյն շնորհքներէն. գիտէին, թէ Աստուած՝ նախաջրհեղեղեան մարդկան գործած ամբարշտութեանց վերայ ստրջացած, վերցուց իւր հոգին մարդկան սերունդէն. (Ծննդ. Զ. 3) և այս հոգւոյն շնորհքն վերստին ընդունելու կձգտէին, օրինաց և մարգարէից ցոյց տուած ճանապարհներուն կդիմէին, և մեծ յուսով կակնկալէին՝ Աստուծոյ խոստացած Փրկչին գալստեանն, որ նոյն հոգին վերստին պիտի տար մարդկան ազգին։ Փրկչին աշակերտներն այս ակնկալութեամբ արիացած և յուսադրուած աղքատներ էին, որոցմէ ոմանք՝ տեղեակ լինելով Դանիէլ մարգարէի եօթներորդների լման ժամանակին՝ մարդկան մէջ մարդացեալ Փրկիչը գըտնելու կշրջէին, ոմանք ալ Յովհաննու մկրտութեան

(1004 / 1934) 20007-59

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Հայկ. ССР. Библиотека
7/XI-1922
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

լսելով Փրկչին կհետևէին, և չէին կարողանար բաժանուել։ Այս աշակերտներուն կիսոստանայ Փրկիչն՝ Աստուծոյ արքայութիւնն, և թէ նոցա քաղցածութիւնն՝ յագուրդ պիտի գտնէ, և նոցա լացն ուրախութեան և ծիծաղի պիտի փոխուի։

«22. Եւ՝ նոքա՝ է յիշեալ երբ որ մարդիկ նախատէն գնէին և ելբ էրենցմէ դուրս հանէն գնէին. և ասէն, և չար անուն հանէն յեր վերայ՝ Մարդոյ որդւոյն պատճառաւ։ 23. Ուրախացէ՛ք այն օրը, և ցնծացէք, զի ահա յեր վարձքերն շատ են երկինքումը. նոցա հայրերն այսպէս կանէին մարգարէներուն։

Ըստ որում Աստուծոյ թագաւորութիւնն լոյս է, և երբ ծագի մարդկան վերայ, նորա լուսոյն առաջը պիտի փարատի և ոչնչանայ աշխարհիս թագաւորութիւնը—սատանայի բռնութիւնն՝ որ խաւարի համեմատ է Աստուծոյ թագաւորութեան լուսոյն համեմատութեամբ. ըստ որում աշխարհիս թագաւորութիւնը չարագործ է և խաւար կսիրէ, վասն որոյ և Աստուծոյ լուսոյն հակառակ է, ըստ այնմ և աշխարհիս թագաւորութեան յարած մարդիկն հակառակ են Աստուծոյ թագաւորութեան յարողներուն. և պիտի ատեն, հալածեն. և չար անուն պիտի հանեն նոցա վերայ միայն այն պատճառաւ, որ իրենց խաւարի չարագործութիւնն՝ յայտ յանդիման խայտառակող լոյսն—Աստուծոյ որդւոյն սփռած լոյսն

չեն սիրեր։ Երբ որ այս օրերն հասնին՝ այսինքն՝ երբ որ Աստուծոյ թագաւորութեան լոյսն սկսի լուսաւորել իւր հաւատացեալներն, և աշխարհիս խաւարն սկսի հակառակել նոցա դէմ՝ արդէն իսկ մօտ է արքայութեան տիւն, որուն դէմ իսկոյն պիտի փարատի աշխարհիս խաւարն. և այն ժամուն պիտի սկսի կատարուել այս երանութիւնն, յայտնի պիտի լինի, թէ քանի՛ շատ է աշակերտաց վարձքն երկինքում՝ Աստուծոյ արքայութեան մէջ. փոխանակ այն ատելութեան և հալածանաց՝ զոր կրեցին խաւարի իշխանութենէն։

«24. Բայց վա՛յ է յեզ ռեձուռոնէրուռ՝ զի յեր մխիթարութիւնն ընդունէցէք։ 25. Վա՛յ յեզ՝ որ այժմ կըշտացած է։ զի պիտի տաղտկանայ։ վա՛յ յեզ՝ որ այժմ կծիծաղէք։ զի պիտի սգայ և լայ լինիք»։

Աստուծոյ արքայութեան ցանկացողներուն երանութեանն համեմատութեամբ՝ ի հակառակէն վա՛յ կկարդայ այն ամեն մեծատուններուն որոնք՝ Աստուծոյ պարգևն այս աշխարհի ունայն փառքերուն միայն շռայլելով միխիթարութիւն գտան. այս մեծատուններն՝ այն աղքատներէն են, որ իրենց աղքատութիւնը չեն գիտեր։ Այս աղքատներն որ ինքզինքնին մեծատուն կհամարին, և իրենց ընչից շատութեամբն կուշտ կերած և խմած՝ ու ծիծաղի և ուրախութեան մէջ են՝ պիտի քաղցենան, և սգան ու

լաց լինեն, երբ որ Աստուծոյ թագաւորութեան լոյսը տարածուի, այն ժամանակ պիտի գիտնան, թէ Աստուծոյ հոգւոյն շնորհքէն զուրկ են եղեր, և ձեռք բերելու չեն հետևիր։

« 26. Վա՜յ յեղի, երբ որ ամէն մարդիկ՝ լա՜ռ ասէն յեր մասին. զի այդպէս կանէին նոցա հայրերն՝ առաջ մարգարէներուն։

Սուտ մարգարէներն՝ չար մարդկան առաջ չար կիսօսէին. և նոցա աչքին լաւ կերևէին, իսկ լաւ մարդկան առաջ լաւ կիսօսէին, և նոցա աչքին ևս լաւ կերևէին. ամէն կարգի մարդկան առաջ՝ նոցա կամքին կհամակերպէին, և ամենքէն միապէս գովեստ կընդունէին. բոլոր ջանքերնին այն էր, որ իրենց վերայ բարի անուն մի հոչակէին։ Այս միևնոյն կեղծաւորութիւնն ունին ամէն խաբեբայ մարդիկ, որոնք իրենց գործելիք չարիքը վարագուրելու համար, բարւոյն նախանձախնդիր եղող մարդկան աչքին բարի կերևին, մինչև որ իրենց չար նպատակին հասնեն։ Այսպիսի չարագործներուն և խաբեբաներուն կկարդայ այս վայը, հակառակ այն երանութեան՝ զոր տուաւ՝ Աստուծոյ արքայութեան համար հալածուած և նախատուած աղքատներուն։

« 27. Այլ յեղ՝ լսողներո՜ւդ կասէմ, սիրէցէ՛ յեր թըշնամիներն, բարի արէ՛ յեղ ատողներուն։ 28. Օրհնեցէ՛ յեղ անիծողները, աղօթ արէ՛ յեղ նեղողներուն վերայ»։

Աստուծոյ արքայութեան ցանկացողներուն յատուկ բարոյականն է այս. Աստուծոյ արքայութիւնը բարի է, որուն՝ միայն բարի եղողներն կցանկանան։ Եթէ բարի է մէկը՝ չէ կարող չար գործել և ոչ թշնամւոյն դէմ. ըստ որում՝ ինքն ևս կլինի չարագործ՝ ինչպէս որ թշնամին է։ Աստուծոյ արքայութեան այս բարոյականն՝ աւելի ևս ընդարձակ մէջ կբերէ Մատթէոս աւետարանիչ. և կհամեմատէ Քրիստոսի այս շնորհաց օրէնքն, Մովսիսի նշանակած վրէժխնդրութեան իրաւունքին։ Մատթէոս աւետարանիչն այսպէս մէջ կբերէ Փրկչին խօսքն. «Լսեցէ՛ք, որ ասացաւ, Աչէ՛ն փոխ աչի՛, ակ՝ ակի՛ փոխ։ Այլ ես կասեմ՝ յեղ որ չարին հա՛մառ չկենայ՛»։ (Ե. 38 39)։ Եթէ չարագործ թշնամին զարկաւ, և ընկերին աչքն հանեց, կամ՝ ակռան կոտրեց, իւր այս գործովն ապացուցեց, թէ ինքն չար է։ Սորա հակառակ՝ եթէ զրկեալն ելլէ ինքն ևս զարնէ թշնամւոյն և նորա աչքն հանէ, կամ՝ ակռան կոտրէ, նա ևս կապացուցանէ, թէ ինքն ևս չարագործ է թշնամւոյն հաւասար։ Իսկ եթէ զրկեալն բարի ոք լինի, կխորհի միանգամ. թէ թշնամւոյն աչքն հանելով կամ նորա ակռան կոտրելով, իւր կորուսած աչքն կամ ակռայն տեղը դրուելու չէ, այլ միայն գործով պիտի ապացուցած լինի, թէ ինքն ևս չարագործ ոք է, այսպէս խորհելով նա կբաշխէ թշնամւոյն աչքը

կամ ակռայն, և չհանէր, որով ապացուցած կլինի, թէ բարի մարդ է ինքն, և չար գործել չգիտէ։ Նոյն իսկ այս ոգւով կպատուիրէ Փրկիչն, որ չարին չը-հակառակենք, սիրենք մեր թշնամին, բարի անենք զմեզ ատողին, օրհնենք զմեզ անիծողին և նեղողին։ Կան մարդիկ, որ այս բարոյականն արդար չեն համարիր, և Մովսիսի նշանակած իրաւունքն աւելի ևս արդար և զգաստացուցիչ կհամարին, բայց՝ այս բարոյականի արդարութիւն աւելի ևս բարձր կիայլի, եթէ գործադրութեան վերայ ևս ուշ դարձուننք։ Աչքէ անցուننք այս գործադրութիւնը։

Մովսիսական իրաւունքը պահպանող ներակցոյը կժողովի, և կվճռէ, որ զրկեալն՝ այն ատենում՝ իւր զրկողին աչքը հանէ։ Որպէս զի զօրանայ զրկելոյն ձեռքերն, զրկողին ձեռքերն կրտնեն կամ կկապեն, և զրկեալը կփորէ նորա աչքն, կամ ակռայն կկոտրէ, նորա գործած չարիքին հաւասար։ այս իրաւունքի արդարութիւն՝ այն միայն է, որ զրկողին միտքը կմնայ միշտ, թէ իրմէն զօրաւոր դատաստան կայ, որ կզօրացնէ զրկուողին ձեռքը, և իւր գործած չարիքն՝ իւր գլուխը կդարձնէ։ Զրկողն՝ մի անգամ այսպէս խելամուտ լինելէ ետքն՝ ո՛չ աչք կհանէ, և ոչ ակռայ կկոտրէ. բովանդակ արդարութիւն յայնմէ, ոչ զրկողն զ[illegible]։

Փրկչին իրաւացուցած բարոյականը՝ այս միևնոյն

արդարութիւնն ունի լիապէս, և կառաւելու ողորմութեամբ։ Փրկիչն՝ իւր բարոյականում՝ իրաւունք պահպանող ներակցոյը կամ դատաւորը չմերժէր, որմէ կհետևի, թէ արդարոց ժողովը պիտի զօրացնէ զրկուածին ձեռքերը, որ իւր վրէժն առնու զրկողէն. այս դատաստանումն՝ արդէն կզգաստանայ զրկողն այնչափ, որչափ որ պիտի զգաստանայ վրէժին լուծմամբն։ Վասնորոյ և Փրկիչը կպատուիրէ զրկուածին՝ որ այս իրաւանց դատաստանումն զգաստացած զրկողին աչքը փորելու փոխանակ, ասէ նորան, ընկեր, կբաշխեմ քեզ՝ քո աչքն, զոր հանելու իրաւունք ունիմ ըստ օրինաց, կբաշխեմ քեզ՝ քո ակռայն, զոր կոտրելու իրաւունք ունիմ ըստ օրինաց։ Այսպիսի գործադրութեան մէջ՝ թէ չարագործը կզգաստանայ, և թէ զրկուածն՝ իւր ձեռքը պահած կլինի չարագործութենէ։ Ըստ այսմ կառաւելու Քրիստոսի պատուիրած բարոյականի արդարութիւնն, քան Մովսիսի իրաւանցն։

Փրկչին պատուիրած բարոյականի այս արդարութեան առաւելութիւնը չտեսնող մարդիկ կան, որ կառարկեն, թէ Մովսիսի դատաստանն՝ կզգաստացնէ և ուրիշներն, որ զրկանք չանեն. իսկ Փրկչին պատուիրած դատաստանի գործադրութիւնն՝ թէև զգաստացուցիչ լինի զրկողին, այլ այնպէս չզգաստացնէր ուրիշներն։ Այս առարկութիւնն իսպառ

աւելորդ է, եթէ նկատենք, որ Փրկիչն այս բարոյականը կպատուիրէ արքայութեան որդւոցն, Աստուծոյ արքայութեան որդւոցը մէջ չարահոգի ոք չկայ, եթէ մին կամ երկուքն երևին անզգաստ, նոքա ևս կզգաստանան։ Իսկ եթէ ի նկատի ունենանք այն ամեն չարահոգիներն, որոնք Աստուծոյ արքայութեան մասին երբէք չեն մտածեր. այնպիսիներուն համար՝ ուրիշ պատուէր ևս կուտայ Փրկիչն. «Երբ որ խրկեցի զձեզ առանց քսակի, առանց մախաղի և առանց կօշիկի, մի՞թէ կարօտութիւն ունեցա՞ք մի բանի։ Եւ նոքա ասացին.—Ո՛չ դ՝ բանի։ Ասէ՝ ասաց. Բայց այժմ է՝ առ ունիցողն՝ թող վերցնէ է՝ առակը, նոյնպէս և մախաղը, և ով որ չունի, թող վաճառէ է՝ հագուստները. և երեն սուր գնէ». (Ղուկ. ԻԲ. 35, 36)։ Այս պատուէրը կուտայ Փրկիչն իւր աշակերտներուն՝ մատնութեան գիշերն՝ դեռ մտտնիչը չեկած։ Այս պատուէրը կվերցնէ այն վերջին առարկութեան տարակոյսը։ Ուրեմն Աստուծոյ արքայութեան որդւոց բարոյականն է՝ իրենց մէջ՝ չարին հակառակ չկենալ։

«29. Ինչորէ՞ զարնողն, դ՝-ան ոչ երկնցուր. և քաշողաց է՝ հանողն՝ շապիկդ ալ դ՝ արգելլեր։

Եթէ չարին չհակառակելու բարոյականին ողորմութիւնն ու միանգամայն արդարութիւնն յայտնի եղաւ, այս խօսքերուն արդարութիւնն ալ յայտնի է։ Աստուծոյ արքայութեան որդւոց մէջ զարնող չպա-

տահեր, եթէ երբէք պատահի, այն՝ յանկարծական բարկութեան, չարի թելադրութեան բորբոքումնէ, որ խսկոյն կմարի, եթէ հակառակորդ չգտնէ։ Կապագ հանողին վերայ միտք արա, թէ ինչու կհանէ. և խելամուտ կլինիս, թէ մերկ է մնացել. այնպիսին՝ շապիկդ ալ տուր։

«30. Ամենոքն՝ որ կհանդրէն է՝ դուր. և ինչ որ դեկը է՝ ելնէն հանէ, յետ դ՝ պահանջեր։

Քեզմէն խնդրողին տուր, երես մի՝ դարձուներ, և եթէ ինքնիրենն առած լինի, յետ մի՝ պահանջեր. միտք բեր, որ ամեն ունեցածդ՝ Աստուծոյ տուրքն է, եթէ չենայես տալ Աստուծոյ աղքատին, Աստուած հարիւրապատիկ կաւելցնէ քեզ։ Ողորմածին փառքը՝ իրեն տրոց առատութիւնն է, որքան տայ առատութեամբ այնքան և տասնապատիկ ու հարիւրապատիկ առաւելութեամբ կհնձէ Աստուծոյ աճեցուցած անդէն։ Տուէք ձեր հացը՝ քաղցածին, որպէս զի Աստուած ցօղէ ձեր արտերին. տուէք մերկերուն՝ ձեր հագուստէն, որպէս զի Աստուած աճեցնէ ձեր բամպակն ու կտաւն։ Հաւատացէք, որ Աստուած արդարին արտը կողողէ և կցօղէ նաև ընդհանուր երաշտութեան տարիներումն։

«31. Ե՞ ինչպէս կամիս՝ որ յեղ անեն մարդիկ, դո՞ւ ալ նոյնպէս արէ։

Փրկչին ուսուցած բարոյականն՝ երկու գլխաւոր

սկզբունք միայն ունի. այն է. Աստուածպաշտութիւն և ընկերասիրութիւն. ընկերասիրութեան բարոյական կանոնները մի մի ասելէ ետքն նոցա ամենն ի մի կհաւաքէ Փրկիչն, և այս ընդհանուր կանոնն կուտայ. որոյ համառօտութիւնն՝ անջինջ կդրոշմուի ամեն սրտի տախտակում՝ եթէ միանգամ միտք առնեն Աստուծոյ արքայութեան յաւիտենական կեանքն։ Նոյնպէս և մենք իբրև քրիստոնեայ՝ իբրև Աստուծոյ արքայութեան քաղցրութեան ճաշակն առած հաւատացեալ՝ բևեռենք մեր սրտերումն Փրկչին շնորհաց այս ընդհանուր կանոնն՝ և ամեն օր ամեն ժամ՝ այս կանոնով չափենք մեր ընկերասիրութեան գործերը՝ և սորա ուղղութեամբն գործենք անդադար՝ քանի որ կեանք ունենք արխարհիս հոգևոր կենաց սակաւաժամանակեայ օրերումն. որոյ փոխարէն պիտի տայ մեզ Փրկիչն՝ Աստուծոյ արքայութեան ժառանգ լինելու որդեգրութիւնն։

«32. Եւ եղիցէ որքան դուք՝ ոչ որդիքդ, զի՞նչ շնորհք կունիցիք՝ զի մեղաւորքն ևս զսիրելիս սիրեն։ 33. Եւ եթէ բարի անէք՝ ոչ բարերարիցն, զի՞նչ է ձեզ շնորհք՝ զի մեղաւորքն ևս նոյնը կանեն։ 34. Եթէ փոխ տայք նոցա՝ որոյմէ առնելոյ ակնկալութիւն ունիք՝ զի՞նչ է ձեզ շնորհք՝ զի մեղաւորքն ևս մեղաւորաց փոխ կուտան՝ որպէս զի նոյն կշեռն յետ առնուցուն։

Այս համեմատական օրինակներում՝ Փրկչին պա-

հանջած ընկերասիրութեան շնորհքն չերևիր. Փրկչին պահանջած շնորհքն՝ այն է՝ որ ընկերասէրն՝ իւր ստացուածքէն զոհ բերէ ընկերին սիրոյն. զոր օրինակ՝ լեցնէ այն ընկերին կարօտութիւնը՝ որ չէ կարող վերադարձնել. այս զոհաբերութիւնն է Փրկչին պատուիրած շնորհքն՝ որոյ փոխարէնն՝ Աստուած պիտի հատուցանէ ընկերասէրին թէ այս աշխարհում՝ և թէ հանդերձեալ աշխարհում։ Ընկերասիրութեան հոգի ունեցող քրիստոնեայն՝ Փրկչի պատուիրած այս շնորհաց իրաւունքն պարզապէս կտեսնէ ըստ այսմ.—Մարդս՝ մերկ յաշխարհ կուգայ՝ և մերկ՝ յաշխարհէ կգնայ. ինչ որ կունենայ մարդ այս աշխարհում՝ զայն Աստուած կյաջողէ գործող ձեռքին. զի առանց Աստուծոյ խնամոցն՝ ոչ երկինք կցօղէ՝ և ոչ երկիրը կկանաչի կամ կպտղաբերէ. ուրեմն՝ ամենայն ինչ բարիք զոր ունիմք՝ և զոր կունենանք՝ Աստուծոյ խնամոց պարգևն է մեր ձեռքում։ Եւ Աստուած՝ այս ամեն պարգևներն մեզի պարգևողն՝ կպատուիրէ՝ որ մենք ևս շնորհենք մեր ընկերին՝ փոխ տանք՝ և չպահանջենք. կերցնենք՝ խմցնենք՝ հագուեցնենք՝ և նոցամէն փոխարէնի ակնկալութիւն չանենք. որպէս զի մեր շնորհքն՝ համեմատի Փրկչին պատուիրած շնորհաց՝ և նա ինքն փոխարինէ մեզ ի կեանսն յաւիտենից։ Ինչպէս որ տալու շնորհքն՝ յետ չառնելումն

է, այնպէս ալ սիրոյ շնորհքն՝ փոխարէնը չսպասելու առատասրտութեան մէջ է. երբ կսիրենք զմեզ սիրող, այս սէր է, իսկ երբ կսիրենք զմեզ չսիրողն կամ մեր թշնամին, այն է շնորհքն, ըստ որում այս սիրոյ փոխարէնն Աստուծմէ պիտի տրուի մեզ։ Եթէ սիրենք մեր թշնամին, սիրել կուսուցանենք նորան, եթէ մեր թշնամոյն գործած չարիքին դէմ չար չը-հատուցանենք, սիրոյ շնորհք է այս, իսկ եթէ այն չարիքին փոխարէն բարիք ևս անենք, առաւել ևս շնորհք է. որոյ տակն իսպառ կընկճուի թշնամին և հոգւով և մարմնով։ Թէ սիրոյ այս շնորհքն ինչպէս կաղդէ թշնամւոյն, այսպէս կասէ Սողոմոն. «Եթէ քաղցած է թշնամիդ, հաց տուր նմա, եթէ ծարաւ է, ջուր տուր. այս որ անես, կրակի կայծեր կլեցնես նորա գլխուն»։ Նոյն իսկ այս մտքով կշարունակէ Փրկիչն։

«35. Բայց՝ սէրեցէք յեր թշնամիներն, և բարի արէք յեղ ատողներուն, և փոխ տուէք նորան՝ որմէ որ յեր ստանելու ակնկալութիւն ունենալու չէք։ և յեր վարձն շատ լինի, և բարձրելոյն որդի լինիք։ զի նա տաղտիր է թէ չարերուն վրայ, և թէ անշնորհներուն։ 36. Գթած եղէք, ինչպէս որ յեր հայրը գթած է։

Մարդ՝ յաշխարհ կծնի մանուկ, բոլորովին անմեղ և սիրով լի, անմեղ մանկութիւնն՝ կատարեալ մարդու ճշմարիտ տիպն է. մանուկն՝ ամեն մարդու կնայի

և կժպտայ, նա թշնամի չգիտէ. այս վիճակին մէջ ամեն մարդ՝ նորա համար մարդ է, ընկեր է։ Փրկիչն՝ այս անմեղութիւնն զգենուլ կպատուիրէ և չափահասներուն, որ միայն է կատարելութիւն մարդուն։ Մեր թշնամին՝ չար կգործէ մեզ. եթէ այն չարիքին չար չհատուցանենք, թշնամին՝ իւր գործովն կյայտնուի իբրև չարագործ. իսկ մենք՝ ոչ չարագործ, այլ չարէն հեռի բոլորովին, որ մինչև անգամ մեր իրաւունքն՝ զոր ունենք նորա չարեացն փոխարինելու, կբաշխենք. այսպէսով յայտնի կլինինք, թէ չարագործ չենք։ Եւ չարագործ չլինելով հանդերձ՝ եթէ այն չարեաց փոխանակ սիրենք մեր թշնամին, այսինքն՝ օգնենք նմա՝ եթէ կարօտ լինի մեզ. կապացուցանեմք, թէ բարեգործենք. այնպիսի բարեգործ, որ ո՛չ միայն չարիք չենք հատուցաներ, այլ և բարիք գործելէ ևս չենք կարող դադարել։ Կատարեալ մարդու գթութիւնն է այս, որ արժանի կարօտեալին վերայ կշարժի, եթէ նա թշնամի ևս եղած լինի. այս գթութեամբ միայն՝ բարձրելոյն արժանի որդի կլինի մարդ։ Բարձրեալն՝ գթած է, և նորա գթութիւնն ընդհանուր է թէ՝ մեղաւորներուն վերայ և թէ արդարներուն։ Եւ զի Աստուած՝ զմարդն ստեղծել է իբրև իւր պատկերն՝ երկրի վերայ, ուրեմն արժան է, որ բարձրելոյն գթութիւնը ունենանք մեր սրտերում. այն է՝ մեզ պատա-

հած ամեն մարդու վերայ մեր գթութիւնն ունենանք, ինչպէս որ կկամենանք, որ ուրիշներն ունենան մեր վերայ։

« 37. Մի դատապարտէք, և չէք դատապարտուիր. մի՛ պատժէք, և չէք պատժուիր. արձակեցէք, և կարձակուիք։ 38. Տուէ՛ք, և տրուի ձեզ. բարուոյ, ճնշեալուն, լցեալ՝ ոչ՝ ոչ՝ ոչ

արդարութիւնն, թէ ունի՞ անմեղութիւն այնչափ, որ իրաւունք ունենայ դատապարտելու, եթէ չունի պէտք եղած անմեղութիւնն, յետ կքաշէ ձեռքը՝ դատապարտելէ, իսկ եթէ ունի անմեղութիւնն, չարիքը կվերցնէ իրաւունքը վճռելով, և չմեղանչել կուսուցանէ ու կարձակէ։

Ինչպէս դատապարտելու դէպքումն, այնպէս է և պատժելու դիպուածումն. պատիժը կտրուի, որպէս զի վնասապարտն՝ այլ ևս չվնասէ. այս նպատակն իրագործելու է առանց վնասելու վնասապարտին, այսինքն պէտք է ուսուցանել, թէ կարելի է չվնասել այլ ևս։ Ցանցաւորին կամ՝ պարտապանին շնորհել, և ազատ արձակել կպատուիրէ Փրկիչն. ինչպէս ինքն շնորհեց մարդկան յանցանքն։ Այս պատուիրանն է նոյն իսկ Փրկչին կատարած փրկութեան նըշանն, որ է սէր. սիրել մինչև իսկ թշնամին և ատելին, և շնորհել նորա յանցանքն։

Եթէ ճշտութեամբ պահենք այս շնորհաց պատուէրն, պիտի արժանանանք Փրկչին շնորհացն, որ բոլորովին կշնորհէ մեզ։ Ի՞նչ չափով որ չափենք մենք մեր ընկերին, նոյն չափով պիտի չափուի մեզ։ Եթէ սիրով և գթութեամբ շնորհենք և արձակենք, Աստուծոյ գթութիւնը կշահենք. եթէ տանք կարօտեալին՝ առատութեամբ, առատութեամբ կստանանք Աստուծմէ։ Աստուծոյ երանութեանն արժանի՝ ազ-

քատ երկրագործն՝ որ հաւատով մեծ է, առատութեամբ կուտայ կարօտեալ դրացւոյն պէտք եղած մի կամ՝ երկու չափ ցորենն. հետևեալ տարին, թերևս չկարողանար վերադարձնել այն կարօտեալն, բայց նորա փոխանակն՝ Աստուած կաւելցնէ նորա անդումն տասն չափով աւելի. այսպէս՝ Աստուծոյ շնորհաց օրէնքին հպատակող երկրագործն կուտայ չքաւորին իբրև փոխ՝ առանց ակնկալելու, թէ երբ պիտի դարձունէ, և նոյն տարին՝ նոյն փոխն կառնու Աստուծմէ տասնապատիկ աւելի։ Այսպէս է Աստուծոյ շնորհքն՝ արքայութեան որդիներուն մէջ արդեամբ յայտնուած, բայց այս շնորհաց հպատակող մեծատուններն՝ կուտան փոխ, և տօկոսիք կպայմանեն, որ նշան է, թէ Աստուծոյ շնորհացն չեն հաւատալ. բայց վերջն ինչ կլինի, աղքատներէն տօկոս կառնու, նոցա աղքատութիւնը կսաստկացնէ, և ինքն կհարստանայ, և կխաբուի իւր կարծիքումն, որ կհամարի, թէ տօկոսիքն մեծ աղբիւր է հարստութեան, և բոլոր ունեցածը կուտայ տօկոսով, որպէս զի աւելի ևս շահի. և ահա ամենը միասին կկորսուի, և ինքն՝ որ միայն տօկոսով կապրէր, և ձեռքի վաստակումն խպառ խամացել էր, քաղցած ու զուրկ կմնայ։ Մինչդեռ եթէ Աստուծմէ առնելու ակնկալութեամբ փոխ տայր, և ո՛չ աղքատէն ստանալիք տօկոսիքին սիրովն, Աստուած՝ աւելի ևս

առատութեամբ պիտի փոխարինէր։

Փրկչին՝ այս շնորհաց պատուիրանին դէմ թերեւս առարկողներ եղան, որոնք տօկոսը կարգարացնէին, և այսպիսի առարկողներն թերեւս աշակերտներէն ոմանք էին. որ չդատապարտել, չպատժել և ազատ արձակել, և առանց տօկոսի տալն՝ հակառակ կը-համարէին ըստ աշխարհի մարդկան, որոց ի պատասխանի հետեւեալ առակն կիսօսի։

«39. Ա՞ւ՛ր մ՚ալ ասաց նոցա. Դիմ կարելի է, որ կուրը կուրն առաջնորդուիլն անէ. չէ՞ որ երկուքն ի խորխորատը կընկնեն. 40. Աշակերտը՝ ի՞ւր վարժապետէն լա՞ւ չէ, ամենն կատարեալն ի՞ւր վարժապետին պէս պիտի լինի։

Այս առակը մէջ կբերէ Յիսուս այն աշակերտաց դէմ, որոնք «Մի՛ դատապարտէք, մի՛ պատժիք, ազատեցէ՛ք, և տո՛ւք» պատուէրներուն դէմ կառարկէին։ Այս առակին մտքէն կիմացուի, թէ հակառակ առարկողներն՝ այն շնորհաց պատուէրներուն միտքն հասկացած չէին, վասնորոյ և կուր կանուանէ զնոսա Փրկիչն՝ կասէ «Մի՝ դատապարտէք». այս ասել չէ, թէ չարը մի՛ վերցնէք, այլ ասել է, թէ չարագործին ուղղեցէք. և այս կլինի իրաւունքը ճշմարտութեամբ հաստատելով, և ստութիւնը նշանակելով, ինչպէս Սողոմոնի դատաստանումն յայտնի կերևի։ Նոյնպէս «Մի՝ պատժէք» կասէ. որ ասել չէ, թէ յանցապարտը թող շարունակէ յանցանք գործել,

այլ թէ սխալն ուղղել և ուղղութեամբ գնալ, սորվեցնել՝ առանց վնասելու. յանցանքին դատապարտելիութիւնն հասկացնել ըստ օրինաց, և բաշխել՝ ըստ շնորհաց Փրկչին։ Նոյնպէս կասէ, «Արձակեցէք»։ այս խօսքին բացատրութիւնը գործնականպէս տուաւ Փրկիչն՝ շնացեալ կնոջ արձակման մէջ. (Յովհ. Ի. 52—Ը. 11). յորում կընդունի փրկիչն, թէ դատապարտելի էր կնոջ գործն. և դատապարտողներուն կթելադրէ, որ իրենց անմեղութիւնն քննեն. և օրէնքն անմեղութեամբ կատարեն, այսպէս թելադրութիւն, «մեղաւորը մի դատապարտէք» ասել չէ, այլ հաստատել է, թէ մեղաւորը դատապարտելի է, և թէ դատաւորութեան արժանաւոր ոք չկայ, որ դատապարտէ, այսպէս հասկացան դատապարտել ցանկացողներն։ Իսկ կինն հասկացաւ, թէ իւր գործը դատապարտելի է. և դողաց դատաստանէն, ըստ որում՝ դատաւոր՝ չկար, որ դատէր, դատաստանն՝ Աստուծոյ մնաց. վասնորոյ և Փրկիչն՝ այս դատապարտութիւնը կընշորհէ մեղաւորին, ըստ որում՝ նա արդէն դատապարտուածի չափ դողաց այն ատենում. կարձակէ Փրկիչն, բայց միևնոյն ժամանակ կպայմանէ, որ այլ այլևս չմեղանչէ։ Այս շնորհաց օրէնքը, կընշորհէ դատապարտութիւնն, և միանգամայն կվերցնէ օրինազանցութիւնն, զոր չէին կարող ըմբռնել հակառակ առարկողներն. որոց

ըմբռնելի անելու համար դարձեալ կշարունակէ, նոյն շնորհաց նշանակութիւնն բացատրելով։

«41. Ինչո՞ւ եղբարք ալէին մէջ (եղած) չէ՞ն կրնար և զ ալեւոր (եղած) քերան չէ՞ պիտի։ 42. Զի՞նչպէս կարդացէք ասել եղբարք, եղբայր, թող որ ալէիր հանեմ այդ չէ՞ն, և դա՝ ալէիր մէջն (եղած) քերանը չէ՞ պիտի կեղծաւոր, նախ զ ալէիր հանէ՝ այդ քերանն, և ապա նայիր, որ չէ՞ն հանէ զ եղբարդ ալէին։

Ինչպէս որ շնացեալ կնոջ դատաստանում դատապարտել խորհող ամբոխին կթելադրէ, որ նախ իրենց մեղքը քաւեն, և ապա ուրիշին մեղքը դատապարտեն, նոյն մտօք կշարունակէ առակաւ և այս յորում աւելի պարզ կերպով կբացայայտէ Փրկիչն՝ իւր նպատակը։ Եթէ մեր աչքում գերան կայ, բնականէ, որ պիտի չկարողանանք տեսնել մեր եղբօր աչքում եղած շիւղն, սակայն մարդիկ բամբասել և դատապարտել սովոր են, որպէս զի արդարութիւն սիրող երևնան։ Բայց ըստ Փրկչին պատուիրանաց, մարդու արդարութիւնն կառաւելու՝ իւր անձին պարտականութիւնը ճիշտ կատարելուն մէջ։ Վասն որոյ և ամեն ոք քրիստոնեայ՝ պարտական է իւր գործը քննել և ուղղել իւր գնացքն արքայութեան շաւիղներում՝ որոյ մուտքն թէպէտ նեղ է ի սկզբան, այլ հետզհետէ կլայնանայ ի կեանսն յաւիտենից։

«43. Զի չէ՞ զ բարի ծառ, որ չար պտուղ տայ, և՝ զ չարն ծառ, որ բարի պտուղ տայ։ 44. Զի ամէն զ ծառ՝ ի՞ր պտուղն կճանչցուի։ Զի չէ՞ ի թուզ հաւաքեն կոկոն, և՝ զ հրենկեն կիրն խաղող։ 45. Բարի մարդն՝ ի՞ր սրտին բարի գանձերէն բարին կհանէ, և չար մարդն՝ (ի՞ր սրտին)չար (գանձէն) չարը կհանէ, զի սրտին յուելուածէն կխօսի նոյա բերանն։

Այս առակներու ճշմարտութիւնն՝ բացայայտ է Պաղեստինու բոլոր ժողովրդեան, որոց սահմաններում կաճին թուզ, խաղող, և ուրիշ տեսակ պտուղներ, այն ժողովուրդը կհասկանար, թէ խաղողն՝ եթէ փուշերու մէջ ևս տնկուի, դարձեալ խաղող կպտղաբերէ. նոյնպէս եթէ փուշը տնկուի խաղողի այգիում, նա դարձեալ չէ կարող խաղող բերել։

Այսպէս՝ բարի մարդն եթէ պատահի չարագործ թշնամւոյ ընկերութեան. դարձեալ բարի կգործէ, չէ՞ կարող չար գործել, նոյնպէս չար մարդն՝ եթէ պատահի բարի մարդոյ ընկերութեան, դարձեալ չար կգործէ, չար կխօսի. չէ կարող օրհնել և աղօթք անել, այլ միշտ պիտի անիծէ, և չարախօսէ։ Բարի մարդու սիրտը՝ բարութեան գանձ է, և չարին սիրտը՝ չարի գանձ։ Թէ բարին և թէ չարն եթէ խօսին, իրենց սրտի յաւելուածէն կխօսին, որոց բերանի պտուղն՝ կյայտնէ և կճանչցունէ նոցա սրտի դրութիւնն. նոյնպէս՝ ամեն գործ՝ սրտի ցանկութեան

և կամայ որոշումներէն յառաջ կուգայ։ Եթէ բարի է սիրտն, բարի միայն կգործեն ձեռքերն։ Չարասիրտ մարդոյ ձեռքէն բարիք չելլէ։

Փրկիչն այս յայտնի և պարզ առակներով բացայայտեց ունկնդիր ժողովրդեան, թէ Աստուծոյ արքայութեան որդիներուն արդարութիւնն՝ շնորհաց առաւելութիւն պիտի ունենայ, այսինքն՝ թէ, նոքա չեն դատեր, չեն պատժեր, կուտան և բարեաց չափով կուտան։ Թշնամիները կսիրեն, ատելիներուն բարիք կանեն, և անիծողներուն կօրհնեն։ Որոց վարձքն երկնքում՝ աւելի կշատանայ՝ նոցա սրտերում պահուած բարութեան համեմատ։

«46. Ինչո՞ւ ասէր, որ կոչէք զիս. Տէր, Տէր, և չանէք զոր ասեմ ինչ։»

Ինչպէս կերևի, Փրկչին մէջ բերած առակներն ևս պէտք եղածին պէս շնորհագործեցին ունկնդիր բազմութեան վերայ, և տարակուսած մնացին, ու կխորհէին, թէ ինչ պիտի լինի մարդու վերջն՝ եթէ թշնամուն թշնամանաց չփոխարինէ, ատելիին՝ սիրով փոխարինէ, և անիծողին՝ օրհնութեամբ, թերևս չէին կարողանար համոզուել իրենց մտքումն թէ այսպիսով կվերանան թշնամութիւններն, կպակասին ատելութիւններն։ Թերևս հակառակէն կխորհէին, թէ անշուտ պիտի յաճախեն թշնամութիւններն և ատելութիւններ, եթէ նոքա չդատապարտուին և ան-

պատիժ թողուին։ Այլ Փրկիչն՝ այս բարոյականը կսահմանէր այն մարդկան, որ Աստուծոյ արքայութեան ընտանիքը կկազմեն, և կպատուիրէր այս պատուէրներն՝ ոչ միայն մէկին կամ միւսին, այլ ամենուն միանգամայն. զոր եթէ պահեն ամենքը, թշնամութիւն և ատելութիւնն իսպառ պիտի վերնան քրիստոնեայ ընտանիքներէն, որոնք Աստուծոյ արքայութիւնը կկազմեն։

Փրկիչն՝ միակրօն և միաստուածեան ընտանեաց բարոյական կպատուիրէ, ունկնդիրն՝ այլակրօն և օտարաստուածեան թշնամութիւն և ատելութիւններն միայն կմոռանէ, վասնորոյ և չհամոզուեր այն բարոյականի ճշմարտութեան կամ արդարութեան։ Այլ Փրկիչն ուրիշ անգամ առակով կսորվեցնէ, թէ «Արքայութեան որդիներուն մէջէն դուրս պիտի ձգուին անօրէնութիւն գործողներն». և ուրիշ անգամ կպատուիրէ, «որ քսակին, հետերնին առնուն, նոյնպէս մախաղին, և ոչ որ չունի՝ կասէ, թող ձորձերը վաճառէ և սուր դնէ իրեն»։ Եւ այս պատուիրած ժամանակը՝ աշակերտներն յայտնեցին, թէ ունին այնտեղ երկու սուր։ Փրկիչն՝ այսպիսի պատրաստութիւն ևս կպատուիրէ իւր հետևողներուն, և այս՝ այլակրօն թշնամեաց ընդդէմ. մինչդեռ միակրօն և միաստուածեան ընտանիքներու դէմ՝ կպատուիրէ սիրող լինել, բարի, օրհնող և ներող լինել։ Այս կրկին

տեսակ բարոյականի տարբերութիւնն չէին կարողանար զանազանել, վասն որոյ և կատարելու հաւանութիւն չէին տար։ Եւ այս պատճառաւ կասէ այս յանդիմանականը. թէ տէր որ կոնչէ զէս, և ինչ որ կասէ չէ անէր։

Թերևս հարցուցին ունկնդիրներն, թէ մեր թշնամին չգատենք, յանցագործը չպատժենք, փոխ ուզողին տանք և յետ չպահանջենք, այսպէս անելով որո՞ւ պիտի նմանենք, այդպիսի ժողովուրդ կա՞յ, կարո՞ղ է լինել աշխարհիս վերայ։ Որոյ կպատասխանէ։

«47. Եվ եթէ ողջունիք զեղբարս ձեր միայն, զի՞ զանազան արարջիք։ Եթէ՝ զարդարս, որ դառն զկրկին չինեն, և որ զերբեր, խորտակեալ, և զկիսեալ՝ տարի վերայ դրան, հեղեցէք զարիւն ձեր՝ զքեզ դառնը ձեզ, և զայսոցանս՝ զարիւնս վերի վերայ հատարարաւ էր։

Այս նմանութեամբ կվճռէ Փրկիչն, թէ իւր վարդապետած բարոյականի գործն՝ անյաղթելի է աշխարհիս մէջ պատահելիք չարիքներէն։ Ըստ այսմ՝ եթէ մի քրիստոնեայ ժողովրդ՝ իւր մէջ իրաւունք անէ և չդատապարտէ. ուսուցանէ, և չպատժէ. տայ, և չպահանջէ այն ժողովուրդն՝ այնպէս կհաստատուի, կամրանայ, որ աշխարհիս հեղեղներուն ևս կդիմանայ, և չքանդուիր։ Արդարև՝ Փրկչին պատուիրած

բարոյականը՝ կմիացնէ բոլոր ընտանիքն. և մի սիրտ և մի հոգի կանէ, իրարու կկապէ անբաժանելի կերպով. նոյնպէս և ամբողջ ժողովուրդը, և ազգն, եթէ ճշտութեամբ պահեն այս բարոյականն. և այս միացեալ ընդանիքն. ժողովուրդն, ազգն, այնպէս կզօրանան, որ այնուհետև ո՛չ մի աշխարհային չարիքի դէմ չեն կտրուիր։

«49. Լուա՛ եվ որ կլսէ իմ խօսեալս, և չկատարէր նման է մարդոյ՝ որ տուն չինելոյ՝ լինի հողի վերայ՝ առանց հիմանց, զոր ձեռնեց գետն, և զոր եվ ինչ. և ան տունն նրբանարձակ՝ մեծ եղև։

Մի տուն, մի ժողովուրդ, մի ազգ՝ որչափ որ կզօրանայ միանալով, այնչափ կոկարանայ մէկմէկու հակառակ բաժանուելով. Փրկչին պատուիրած բարոյականը՝ պառակտումներն կվերջացնէ և անխզելի կմիացնէ, որով կզօրանայ տունն կամ՝ ժողովուրդն, ինչպէս որ կզօրանան ոստայնի թելերն՝ իրարու միանալով։ Իսկ եթէ տուն մի, ժողովուրդ մի՝ շարունակէ իւր մէջ՝ չարին չար հատուցանել, բաժանումներըն կսաստկանան, և երբէք չեն միանար, վասնորոյ և պիտի փչանան որևիցէ մրրկի դէմ։

Ահաւասիկ Փրկչին պատուիրած բարոյականը կարդացի ձեր ականջին, և թարգմանեցի ձեր հասկանալուն չափով։ Պահեցէք այս օրէնքն սիրոյ օրէնքն՝ ձեր ընտանիքում, և տուներնիդ կհաստատուի ան-

կործանելի։ Եթէ պատահի ընտանիքումն՝ որևիցէ չար, չարին չար մի հատուցանէք, որպէս զի հակառակութիւնը վերջանայ, և միութիւնը զօրանայ։ Նոյնպէս ամբողջ ժողովուրդդ, իբրև մի տան ընտանիք, մի եկեղեցւոյ միակրօն որդիք, պահեցէք այս բարոյականն՝ հասարակական ամեն խորհուրդներում՝ և գործերում՝, և ահա կզօրանայ ձեր միութիւնն՝ անխզելի, ինչպէս կտաւի թելերն, որոնք առանձին առանձին՝ շատ սակաւ ոյժ ունին, բայց երբ ոստայնումն կմիանան, կդիմանան և մեծ ուժի, ու չեն կտրուիր։ Պահեցէք և ազգին ուրիշ ժողովուրդներուն հետ միևնոյն խաղաղութիւնն ու սէրն՝ ըստ որում՝ և ամենքդ միևնոյն արիւնէ յառաջացած՝ մինոյն Աստուծոյ պաշտօնումն մի և նոյն կրօնն ու բարոյականն կուսանիք՝ որով կզօրանայ ընդհանուր եկեղեցւոյ միութիւնն՝ և կանգուն կմնայ ի կեանսն յաւիտենից։

ԿԻՒՐԵՂ ՎԱՐԴ. ՍՐԱՊԵԱՆՑ

Հ. Խ. Հ. ՀԱՅՐԱՑԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գրանցեալ է՝ 7/XI-1922
Ա. ԱՄԱՍԻԱՆՑ

1077

0028098

1077